61. ՋԱՂՑԲՆԻ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի իրեք քուր կէղնին։ Էն պզտիկ քուր կպառկի, տղեմ՝ կբերե։

Էն էրկու քուր կէլնին, կասին.—Մինք լէ կարգվինք, մըր էրկտիք վաղ լսին մըր քուր տղա է բերի, մըզի ճիժ չէղնի, էլ մըր հ՝էրես չըն իշքի։

Կասե էն մեկ քուր.—Իմա՞լ էնինք, զէդոր տղեն կորցունք։

Միջնեկ քուր կասե.—Ես կգողնամ բերիմ, դու լէ տար կորցու։

Պզտիկ քուր կէլնի կէրթա, կգողնա զէդ տղեն, կառնե կիգա։

Մեծ քուր կասե.—Հըմեն-հըմեն բերեր իս, հ՝ո՞րի սպանեք, դնեք սնդրկի մը մեջ, թալենք էրթա ջրի մեջ։

Կբերեն դնեն սնդրկի մեջ, կթալեն ջրի հետ կէրթա։ Կէրթա ջաղցի բանտ կասրռվի, ջաղցբան կտեսնա օր ջուր կտրավ, կէլնի կտեսնա օր սնդուկը մե, կբերե կբանա, կտեսնա, օր չորս-հինգ ամսրկան էրեխե մը։ Կառնե կէրթա տուն, կնկան կասե.—Կնիկ, ախբր մզիկ ճիժ չկա, աստված մզիկ տվեց, պահենք զէդա տղեն, էնիք մզիկ տղակ։

Կհանին ժամանակըմ, զէդ տղեն յոթ-ութ տարեկան կէղնի։ Էդ հ՝էրկրի թագավորն ու լալեն կմտնին դարվեշ խըլըղի, կիգան կօլըրդին, կիգան էդ ջաղցբնի տուն մսաֆըր կէղնին։ Հարց ու

փորձ կէնին.—Ձըր թագավոր իմա՞լ է, ձըր հալն իմա՞լ է, ո՞ւզի իք ձըր թագավորից։

Ջաղցրան թե աղեկ, թե գեջ ջուհաբըմ կիտա, լալի աչք կընկնի տղեն։

Թագավորին կասե.—Էդա տղեն կտեսնա՞ս. օրի պիտի էղնի օր հ՝էլնի առնե զքու ախչիկ ու քու տեխ նստի թագավոր։

Թագավոր կասե.—Ջանը՛մ, ի՞նչ է կասիս, լալա, ջաղցբնի տղեն իմա՞լ կիգա զիմ ախչիկ առնե ու նստի իմ տեխ թագավոր. էդի անկարելի բան է։

Լալեն կասե.—Թագավո՛ր, ես չըմ գինա հ՝էրկրեն բարակ ասի, էկո ես ու դու խավլմ՝ էնինք, օր էգի կառնե զքու ախչիկ, ղաթի կառնե, օր չառավ՝ զիմ գլուխ զարկ։

Թագավոր կասե.—Լալա՛, էրթանք տեխըմ էրկու լէ օլըրդինք հ՝իգանք կառնիմ քիչըմ փարա, կիգամ զէդ տղեն կգնիմ, կառնիմ կէրթամ, կանի տեսնանք քու խո՞սք կէղնի, թե՞ իմ։

Կէրթան քանիմ՝ տեխ լէ կօլըրդին, ուրանց հետ կառնին քիչըմ փարա, կտառնան կիգան ջաղցբնի տուն, բայց էդ ջաղցբան չգինա, օր էգի թագավորն ու լալեն ին, գինա էրկու դարվեշ ին։

Կիգան, ջաղցբնին կասին.—Ջաղցրա՛ն, դու ըխդիար, քու կնիկ ըխդիար, ձգիկ մանցեր է օչխըրիմ՝ ումր, տաք զէդա տղեն, չըք կոնա պահի, տվեք մզիկ տանինք, մինք լէ ջահել ինք, կպահինք մեսցունք։

Ջաղցբան չիտա։ Կնիկ կիգա կասե.—Մա՛րդ, էդոնց խոսքն է, դու լէ ըխտիար իս, ես լէ, էդի մըր ճիժ չէ, դու լէ գտեր իս բերի, էկո իտանք առնինք մզիկ բոլամա փարա, իտանք առնինք քանիմ՝ տավար, ապրինք հար մեռնինք։

Վեր հասըլ կէլնին, կծախին։

Էդ էրկու դարվեշ կառնին զտղեն, ջաղցբնի տնեն ու կէլնին կիգան, օր կիգան, թագավոր լալին կասե.—Լալա՛, թե օր զէդա տղեն սպանիմ, պիտի ասիս, թե ես իմաստուն ենք, թագավոր նախանձավ ընձի, սպանից, թե օր չսպանիմ, պիտի ասիս՝ իմ խոսք կէլնի։ Կանե ես զէդի պիտի չսպանիմ, տանիք էդա բանձր սարու գլուխ, կապիմ ծառ ու թողինք էրթանք, տեսնամ իմա՞լ քու խոսք կէլնի, օր կասիս. «Գրուկն չավերի»։

Կառնեն զիրար, կէրթան, կէլնին սարում՝ գլուխ, թագավոր Ալբերե զտղեն կապե ծառ, կթողե կէրթա։ Կասե.—Լալա՛, թըղ մնա

Էդա տեխ կա:պուկ, տեսնամ քու խոսք կէլնի՞. չէ, գել ու գաղան կիգա կուտե կէրթա։

Էնդոնք թըղ էրթան ուրանց ճամբու հետ, տղեն թըղ մնա կապուկ ծառ։

Աստծու հրամանքով էնգիեն բազըրկանըմ կիգա, կտեսնա օր տղեմ՝ հանդե կապուկ ծառ, ծառուց կիջու կհարցու՝ «Ջքզիկ ո՞ր բերեց կապեց էդա տեխ»։

Տղեն լէ ֆամ չէնե ասե. «Էրկու դարվեշ բերին». խելք չկտրե, կասե. —Ը՞մ դինա։

Կառնե կէրթա ուր տուն, կէնե ուրին տղա, էդ բազրկնին էլ ճիժ չկեր։

Տարավ ուր տուն, թասլիմ էրեց ուր կնկան, ասեց.—Կնի՞կ, աստված տվեց զէդա մզիկ, վերցու պահե։

Թագավորն ու լալեն թողին գացին ուրանց տեխ նստան։ Թագավոր կէրթա նստի ուր տեխ, իմալ կէղնի՝ ուրանց էրթալու, գալու վրեն խոսք կրացվի, էդ տղի խորաթեն կիգա մեջտեղ։

Թագավոր կասե.—Վաղե՛ր, ըշթա ես էդա տեխ գրեր իմ, աստված սաղութեն իտա, գալ տարի մեկ լէ կէրթանք օլըրդինք, տեսնանք էդ տղեն սա՞ղ է, գե՞լ է կերե, իմա՞լ էղի օր քու խոսք չէլավ, իմա՞լ կէնիս իմ ձեռք։

Վաղեր կծիծղա։

Տարին կթմի, մեկ լէ թագավորն ու ուր լալեն դարվեշ խըլըղով կէլնին կօլըրդին։ Կիգան բազրկնի տուն մսաֆըր կէղնին, լալի աչք կքեսնի տղեն, տղեն հըմալ էղեր է, օր խզմաթըմ կէնե, ամսալ իսկի չուղե, թամ բաբաիկիթմ՝ է։

Էդ տեխ կուտին, կխմին, էրկու օր կմնան, էրկու օրեն վերջ, լալեն ու թագավոր կէլնին էդ քաղքի մեջ կօլըրդին։

Օլըրդելու վախտ լալեն կասե.—Թագավո՛ր, քու միտք կիգա՞ օր հերու օլըրդանք, էկանք ջաղցբնի տուն, ասի քզիկ. «Թագավոր, գինա՞ս, էդա տղեն պիտի մեծնա, առնե զքու ախչիկ ու քու տեխ նստի թագավոր»։ Դու լէ ասիր. «Հա, հա, սորա գնեցիր զտղեն, տարանք թողինք սար ու հ՚ընցանք գացինք մըր տեխ, էդա էն տղեն է։

Թագավոր կասե.—Հա՛, հա՛։

Վաղերն կասե.—Շա՛տ աղեկ, հ՚իրկուն կդառնանք էրթանք, մասալեմ՝ ես կասիմ, մեկ՝ դու ասե, մեկ լէ կիտանք բազրկնին ասե, դու կտեսնաս իմալ իմ խոսք կէլնի, չէ՝ քում։

Հ՝իրկուն կդառնան, կիգան բազրկնի տուն, մեկ-մեկ մասալա կասին, սորա բազրկան կվերցու կասե.—Վախտին ես հըմլա թուճարմ ենք, գացեր ենք թուճրութենի, էկա ֆըլան սար, տեսա էդա տղեն կապուկ ա ծառ։ Ընծիկմ լէ ավլատ-թավլատ չկեր, բիճ էր գիցա, ինչ էր չգիցա, հարձրկի բերի էրի ընծիկ տղա։

Լալեն ասեց.—Իմա՞լ է, թագավոր, իմ խոսքն է, չէ՝ քում։

Թագավոր ասեց.—Քու խոսքն է։

Ասեց թագավոր լալին.—Լալա՛, մեկըմ գտնաք, ճամբինք էրթա Իսդանպոլ, թուղթըմ կա մգիկ, տանե ու զչուհաբ առնե հ՝իգա, փարա շատ իտանք, բազրկան չի՞տա զուր տղեն։

Խոսք բացին, բազրկան ասեց.—Հ՝որի՝ չըմ իտա։

Տվեց ու ուրին առավ հ՝եռսուն օսկի։

Թուղթ գրեց սադրազամին, թե. «էդա տղեն հ՝իրկուն կհասնի, լուսուն կզարկիս զգլուխ, լուսուն կհասնի, հ՝իրկուն կզարկիս»։

Առավ զտղեն զթուղթ ու էկավ, չգիներ ի՞նչ էր գրուկ թղթի մեջ։ Տղեն էկավ, նը՛ տեխ գիներ ու նը՛ ճանաչ ուներ, խարիբ ու քոռ, քշեց էկավ մտավ թագավորի խաս բաղչեն ու անոթի, ծառավ պառկավ քնավ։

Լուսուն շուտ թագավորի ախչիկ հ՝էլավ լըվացվավ, էկավ բաղչի մեջ օլըրդավ, տեսավ տղեմ՝ կա էդ տեխ քնուկ, դու գիներ մանի լուսու կտոր, միտք փոխեց, ասեց. «Ես զէդա տղեն պիտի առնիմ»։ Ախչիկ զտղեն օր տեսավ, էլ օտք չբռնեց էրթեր, իշքեց, տեսավ օր տղի արախճին գլխուց հ՝ընկեր է, մեջ թուղթըմ կա, իշքեց էդ թղթի վրեն մըհոր լէ կա, ֆքրավ ուր հոր մըհոր։ Բացեց, կարդաց, տեսավ, օր թագավոր ուր սադրազամին գրեր է, «էդա տղեն հ՝իրկուն հասավ, լուսմութ զգլուխ կզարկես, լուսմութ հասավ, հ՝իրկուն կզարկես»։ Զթուղթ օր կարդաց, ախչիկ ասեց. «Վալլահի, ես էդա տղի արնի տակ չպիտի մտնիմ, ես պիտի ազատիմ զէդ տղեն»։

Առավ զտղեն, էլավ ուր հ՝օդեն, էնտեխ թուղթըմ գրեց տվեց տղին, ասեց.—Տղա՛, զէդա թուղթ առ, հան քզիկ տաս-քսան օսկի լէ փարա, հէլի էդա քաղքի մեջ, որն օր հ՝ռաստ էկավ քզիկ, ասե. «Զէդա թուղթ թագավորից բերեր իմ սադրազամին, զտեխ չըմ դինա հ՝ուր է, առ քզիկ հինգ տաս օսկի, տար տուր զէդա թուղթ սադրազամին»։

Տղեն հ՝էլավ, գնաց, տղեմ՝ հ՝ռաստ էկավ։ Հանեց տաս օսկի

տվեց տղին, ասեց.—Զէդա թուղթ տար տուր սադրազամին։ Էդ օր տարավ տվեց, սադրազամ զգլուխ զարկեց։

Ախչիկ թուղթըմ լէ սադրազամի բերնեն գրեց ուր հոր, թե՝ քու խոսք իճրա էրի, ավեց տղեն առավ էկավ։

Տղեն առավ զէդ թուղթ, էկավ։ Ասեց.—Ջանը՛մ, էդ ի՞նչ բան է, ես գրի, թե, էդա տղեն լուսուն կհասնի, հ՚իրկուն զգլուխ կզարկես, հ՚իրկուն կհասնի՝ լուսուն։ Հրմկա լէ սաղ սալամաթ դարցեր է էկի ու կասե՝ «Քու խոսք իճրա էրի». էդի չհասկցե՞ր է, ի՞նչ բան է իճրա էրի։

Լալեն ասեց.—Թագավոր ապրած կենա, գրուկն չավիրի, իմալ էնիս, ախըր էդա տղեն զքու ախչիկ պիտի առնե, ինչ կուզիս էրե, շարա չկա։

Էդ խոսքի վրեն թագավոր հ՚ելավ օլոր օր գիրըմ լէ դրեց սադրազամին, թե՝ «Զէդա տղեն ճամփի էկավ, հ՚իրկուն հասավ՝ լուսուն զգլուխ կզարկես, լուսուն հասավ՝ հ՚իրկուն կզարկես, չթողիս սալամաթ դառնա, օր թողիս դառնա հ՚իգա, վա՛յ, քզիկ, քու գլուխ կէրթա»։

Ախչիկ սորվեցուցեր էր. «Թուղթ օր բերիս, բի իմ խեչ»։ Առավ զթուղթ, գնաց թագավորի խաս բաղչեն։ Զթագավորի ախչիկ գտավ։ Ասեց.—Էկա՞ր։

Տղեն ասեց.—Հա՛։

Բացեց, կարդաց, տեսավ օր հ՚ավալկու պես, մեկ լէ գրեր է հեր սադրազամին. «Էդա աղեն լուսուն հասավ, հ՚իրկուն կզարկիս զգլուխ, հ՚իրկուն հասավ՝ լուսուն կզարկիս»։

Ախչիկն ասեց. «Վալահի, հերիք է, ես չըմ թողի էդա տղի գլուխ զարկին»։ Հ՚էլավ բերեց գիրըմ գրեց հոր բերնեն սադրազամին, թե էդա տղեն լուսուն հասնի հ՚իրկուն կպսակիս իմ ախչկա վրեն, հ՚իրկուն հասնի՝ լուսուն կպսակիս» ու մհոր կզարկե վրեն, կիտա տղի ձեռք, կասե.—Առ ու գնա։

Տղեն կառնե զթուղթ ու դեմ կիգա սադրազամին։

Սադրազամ օր զթուղթ կտեսնա, կասե.—Ես կառնա՞մ թագավորի խոսք կոտրիմ, թագավորի հրաման է, պետք է կատարվի։

Հրաման կէնե՝ զհարսնեք կբռնի։ Էնդոնք թըղ հասնին ուրանց մուրազին, թագավորն ու լալեն թըղ էրթան հ՚էրկըրներ օլըրդին։

Թե տարիմ, թե էրկուս կօլըրդին, կդառնան կիգան օր ախչկան տղեմ՚ լէ էղեր է։

Կիգան կէրթան հ՚առեջ, լալեն մուժդա կիտան.—Թագավոր ապրած, զիմ մուժդեն ի՞նչ կիտաս, էդա քու թոռն է, էդա լէ՝ էն տղեն օր ճամբիր զգլուխ զարկել կիտեր։

Էն տեխ լալեն էփեի ֆարալամիշ կէղնի, կասե.—Թագավոր, ես կասենք դու կասեր՝ չէ, աստծուց օր էղնի, մարդու բերնին չհընկերի գրուկն ավիրէ. տեսա՞ր իմաչ էկավ առավ զքու ախչիկ. յազըլան բոզուլմազ՞։

Թագավոր դուշունմիշ կէղնի, կիգա տուն կիջնի, կիգա, կկանչե սադրազամ օր զգլուխ զարկե, սադրազամ կհանե զթուղթ, կդնե ձեռք, կասե.—էդա քու թուղթ։

Թագավոր կֆքրի գրի վրեն, օզորդ՝ էդա ուր գիր, էդա լէ ուր մըհոր։ Կմտածե. «Իմա՞լ էնիմ զէդ տղեն բաթըրմիշ էնիմ»։ Կիգա ուր բաղչաջուն թանբիհ կէնե, կասե.—Յոթ գազկան հոր կփորիս հ՚էսօր էդա տեխ, որն օր լուսուն շուտ էկավ, կթալիս հոր, ես լէ էդնիմ՝ կթալիս։

Բաղչավան կփորե, կխըլըսի, կիգա կասե.—Փո՛րի։

Ախչիկ թանբիհ էրեր էր տղին.—Իմ հեր զքզիկ հ՚ուր կճամբե, բելա հ՚իս չէրթաս, կիգաս իմ խեչ, սորա կէրթաս։

Թագավոր կկանչե զփեսեն, թուղթըմ կիտա ձեռք, կասե.—Լուսուն շուտ կէլնիս կառնիս զէդա թուղթ, կտանիս կիտաս բաղչավանչուն։

Տղեն կասե.—Հա՛, թըղ էղնի։ Ու կթորկե կիգա։

Լուսուն շուտ կէլնի օր էրթա, միտք կընկնի կնկա խոսք, օր ասեր է. «Իմ հեր զքզիկ հ՚ուր օր կճամբե, բելա հ՚իս չէրթաս»։ Կդառնա կիգա կնկա խեչ, կնիկ. կխոսեցու կհանգընա։

Թագավոր շուտ կէլնի կէրթա, կասե. «Էրթամ տեսնամ իմա՞լ էղավ, բաղչավան զտղեն թալե՞ց հոր, չթալե՞ց»։

Կէլնի կիգա, բաղչաջին հըմա կբռնե ու ըլլոթ հորու մեջ։ Ինչխըգար կպոռա.—Ջանը՛մ, ես թագավորն իմ, զիս մը՛ թալի։

Բաղչավան կասե.—Թագավոր կէղնիս, որ կէղնիս էղի, թագավոր ամբ էնէ օր ինք լէ էղնի՝ թալիմ։

Թագավոր թըղ հ՚ընկնի հոր, մինք դառնանք վըր տղին։ Գեժդանգեժ, հ՚էլավ, առավ զթուղթ, էկավ տվեց, ասեց՝ տանիմ իտամ՝

---

* Գրվածը չի ջնջվի (Ս. Կ.)։

բաղչավանջուն. էկավ օր տվեց բաղչավանջուն, կարդաց, պաղավ մնաց, բան բանե հ'ընցեր էր։

Գացին լալին ասին։

Լալեն ասեց.—Ցազըլան բոզուվմազ, որն օր ուրիշին հոր փորե, ինք մեջ կպատի։ Անբարդավան մարդու տեխն է։

Ֆքրավ ինք չէղնի, էղնի թագավոր։ Բերեց զտղեն դրեց թագավորի տեխ, թագավոր ու ուր խոսք էկավ տեխ, փըրթավ ազատավ։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։